ԳԼԽԱՎՈՐ ՏՆՕՐԵՆԻ ՈՐՈՇՈՒՄ

07 նոյեմբերի 2012 թվականի N - 2
ք. Երևան

ԺԱՄԿԵՏԱՅԻՆ ՎԱՐԿԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ՀԱՐԹԱԿԻ ԵՐԱՇԽԻՔԱՅԻՆ ՀԻՄՆԱԴՐԱՄՈՒՄ ՀԱՇՎԱՌՎՈՂ ՊԵՏԱԿԱՆ ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԿԻՐԱՌՎՈՂ ՁԵՂՉՄԱՆ ԳՈՐԾԱԿԻՑՆԵՐԻ ԵՎ ՇՈՒԿԱՅԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՆԵՐԳՐԱՎՎՈՂ ԺԱՄԿԵՏԱՅԻՆ ՎԱՐԿԵՐԻ ԳՈՒՄԱՐԱՅԻՆ ԱՌԱՎԵԼԱԳՈՒՅՆ ԹՈՒՅԼԱՏՐԵԼԻ ՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «ՆԱՍԴԱՔ ՕԷՄԷՔՍ ԱՐՄԵՆԻԱ» ԲԲԸ (այսուհետ՝ Բորսա) «Ժամկետային վարկային ռեսուրսների քլիրինգի և վերջնահաշվարկի կանոնների» 3-րդ գլխի 17) կետով Բորսայի գլխավոր տնօրենին վերապահված իրավասությունը, Ղեկավարվելով Բորսայի կանոնադրության 9-րդ գլխի 9.59 կետի զ) ենթակետով՝ Գլխավոր տնօրենը

ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Ժամկետային վարկային ռեսուրսների հարթակի երաշխիքային հիմնադրամում հաշվառվող պետական պարտատոմսերի նկատմամբ սահմանել հետևյալ զեղչման գործակիցները՝

Պարտատոմսի մինչև մարում ժամկետայնություն (օր)	ԴԳ1	ԴԳ2	ԴԳ3
1-182	0.97	0.94	0.92
183-364	0.97	0.94	0.92
365-720	0.97	0.94	0.92
721-1800	0.95	0.92	0.9
1801-2500	0.945	0.915	0.895
2501-3600	0.94	0.91	0.89
3601-ից ավելի	0.925	0.895	0.875

2. Ներգրավվող ժամկետային վարկերի գումարային առավելագույն թույլատրելի չափը շուկայի բոլոր մասնակիցների համար սահմանել երեք միլիարդ ՀՀ դրամ:
3. Հանձնարարել Առևտրային համակարգի ադմինիստրատորին՝ սույն որոշումը Սի-Բի-Էյ-նեթ համակարգի և էլեկտրոնային փոստի միջոցով ուղարկել ՀՀ Կենտրոնական բանկի իրավասու աշխատակցին:

ՀՀ, 0010 ք.Երևան, Միհր Մկրտչյան փ., 5բ · Հեռ.՝ (+374 10) 54 33 21, 54 33 29 · Ֆաքս՝ (+374 10) 54 33 21 լր. 135
info@nasdaqomx.am, www.nasdaqomx.am

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2012թ. նոյեմբերի 8-ին՝ դրա մասին արտարժույթի շուկայի մասնակիցներին տեղեկացնելու պահից՝ մինչ այդ ՀՀ կենտրոնական բանկից առարկություն չստանալու կամ չառարկելու մասին գրավոր տեղեկացում ստանալու դեպքում:

ԳԼԽԱՎՈՐ ՏՆՕՐԵՆ **ԿՈՆՍՏԱՆՏԻՆ ՍԱՐՈՅԱՆ**